յիշեալ ազգասէր անձին՝ հոգեկան քաղցր պարտականութիւն համարի իւրեան միջոցաւ Ամսագրոյդ մատուցանել նմա այսու գիր խորին շնորհակալութիւն։

(Մաքրագրութիւն)

Համար 63

Ի 14 Մարտի 1877 ամի

Ի Նողայա։

ՀՈՒՆՁՔ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԱԽԱԼՑԽՈՅ.

## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Գիտեմք թէ մի ի բազմազան նպատակաց արդիւնաշատ ամսագրոյդ էր հետախոյզն լինել գտանել զեթ կէս մասն որական աշխատութեանց նախնի բանասիրաց և տպագրեալ զայնոսիկ ազատել ի ժանտեաց բազմածախ ժամանակին, յորում բազմաթիւ երկասիրութիւնք և քրտնաջան տքնութիւնք մերոց նախնի իմաստասիրաց իսպառ չքացեալ անդարմանելի կորուստ յետնորդաց առթեցին.

Առ ի մերովսանն նպաստել արդարացի ըղձից և ձգտողութեանց պատուական ամսագրոյդ՝ աւանիկ առաքեմք զգրութիւն ինչ Հունձք Կարապետեան դպրոցի անուանեալ, երկասիրութիւն հանգուցեալ Յակոբայ վարժապետի Կարենեան, հաւաքեալ հրամանաւ նորին բարձր Սրբազնութեան երջանկայիշատակ տեառն Կարապետի Արքեպիսկոպոսի ի 1836 ամի ի Նոր քաղաք Հայոց Ախալցխայ։ Ցուցանէ զի խմբագրութիւն Ձեր գտցէ զայս գրաւոր հնութիւն արժանաւոր տպագրութեան.

Ի սրտէ ցանկացող յառաջադիմութեան Ամսագրոյդ՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՀ. ԲԱԶԱՅՆՈՒՆԻ.

Ի 16 Մարտի 1877 ամի

ՅԱխալքալաք։

Ի պատէհ միջոցի՝ յիշեալ գրուածոյ մի քանի կարեւոր մասը քաղուածօրէն կհրատարակուի։

Թախանձանօք խնդրուած է հետագայ հաշուոյ հրատարակութիւնը։

ՀԱՇԻՒ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՅՈՑ ՍԻՄՖԵՐՈՊՈԼ ՔԱՂԱՔԻՆ ՏԱՐՒՈՅ ԸՆԹԱՑԻՍ 1876 ԱՄԻՆ.

### Եկամուտք արդեանց.

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ծախուած մոմին եկամուտը (վերուչկայ) ի բաքանչիւր ամսոյ մէջ առանձին, զոր օրինակ Յունվար՝ 1 փութ 19 ֆ. Փետրվար՝ 21 ֆունտ. Մարտ՝ 1 փ. 8 1/4 ֆ. Ապրիլ՝ 1 փ. 30 ֆ. Մայիս՝ 31 1/2 ֆ. Յունիս՝ 1 փ. 3 1/4 ֆ. Յուլիս՝ 29 ֆ. Օգոստոս՝ 32 ֆ. Սեպտեմբեր՝ 38 1/2 ֆ. Հոկտեմբեր՝ 20 ֆ. Նոյեմբեր՝ 17 1/2 ֆ. Դեկտեմբեր 20 ֆ. ընդ ամէնը 10 փութ 31 1/2 ֆ. և ծախուած լինելով փութը 2 րուբլիով՝ գոյացել է . . . | 862 | 91 |
| Վեց պահէ՝ սեղանի և ջահերու լուսաւորութեան համար . . . | 103 | |
| Տասն անգամ՝ պատահած ննջեցելոց պատարագէ՝ լուսաւորութեան համար . . . . . . . . . . | 166 | |
| Առանձին պատարագէ՝ լուսաւորութեան համար . . . . . . | 14 | 50 |
| Աւելցած կոճառ 1 փ. 7 1/2 ֆ. հաշուելով փութը 50 կոպ. . . . | 23 | 75 |
| Ծախուած խունկէ . . . . | 22 | 54 |
| Եկեղեցական ափերակ տունէն ապառիկ անցեալ տարւոյ . . . . | 16 | |

| | | |
|---|---|---|
| Եկեղեցական ակ/րակ տանը 400 բալ. ծախուած գումարէն *) | 200 | |
| Դիպադրգէ | 27 | |
| Ընդ ամենայն մուտք յընթացս 1876 ամի | 1435 | 70 |
| Անցեալ տարուանէ մնացեալն էր | 635 | |
| Եկամուտի ընդհանուր գումարն. | 2070 | 70 |

### Ընթացիկ Ծախուց.

| | | |
|---|---|---|
| Իւրաքանչիւր ամսոյ մէջ ծախուած մոմին արժողութիւնը առքին գնովը, այս ինքն փութը 75 կ. | 323 | 71 |
| Սեղանի ջահերու և աշտանակներու համար եկեղեցւոյ հաշուէն տրուած մոմին արժողութիւնը առքին գնովը | 140 | 25 |
| Ծախուած խունկին գինը | 9 | 27 |
| Վարձ տանն դպրին Գէորգայ Երևանցեանց | 60 | |
| Ամսական ռոճիկ նոյն դպրին | 96 | |
| Երկր որդ դպրին Յովակիմայ Յակոբեանց | 96 | |
| Փոխասաց Պաղտասարայ Թօփալեանց | 31 | |
| Ամսական ժամհարչ Նահապետին | 60 | |
| Գիշերապահ Սարգսի | 60 | |
| Պահապանին գերեզմանատան | 33 | |
| Մանր ծախք, զոր օրինակ՝ փայտ, ածուխ, ալիւր, բամբակ, ջուր. աւել, լապտեր, մոմեղեններ, մանր կարասիք և այլ պիտոյք | 109 | 10 |
| Եկեղեցւոյ ներքին և արտաքին կարկատանաց և վերանորոգութեան համար | 193 | 20 |
| Փրկչի թաղման ամպհովանւոյն վերանորոգութեանը. | 79 | 17 |

| | | |
|---|---|---|
| Վարձ տանն քահանայի | 45 | |
| Ընդ ամենայն ծախք յընթացս 1876 ամի | 1335 | 70 |
| Ծախքը մուտքին ընդհանուր գումարէն հանելէն յետոյ՝ ցվերջ տարւոյն աւելացաւ | 735 | |
| Հաւասարակշռութիւն | 2070 | 70 |

### ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

Ա. — Որովհետև եկեղեցական հաշիւներուն տարեգլուխը կհամարուի Դեկտեմբերի 15 ը, այս պատճառաւ 1875 թուի Դեկտեմբերի 15 էն եղած մուտքը և ելքը անցել է 1876 թուի հաշուեմատեանին մէջ, ինչպէս այս տարուան Դեկտեմբերի վերջին 15 օրուան ըլլալիքն ալ անցնելու է եկած տարուան հաշւին մէջ։

Բ. — 1875 թուին Դեկտեմբերի 15 էն մինչև 1876 թուի Դեկտեմբերի 15 ը որ կկազմէ մի ամբողջ տարի, Սիմֆերոպոլի Հայոց եկեղեցւոյ մուտքն եղած է 1435 ր. 70 կ և նախընթաց տարուանէն աւելցածն ևս յինելով 635 ր. գոյացաւ ընդ ամէնը 2070 ր. 70 կ. իսկ տարեկան ելքը, այս ինքն ծախքը 1335 ր. 70 կ. որ հանելով վերոյիշեալ գումարէն, աւելացաւ ցվերջ տարւոյն 735 րուբ։

Գ. — Աւելցած 735 ր. գումարին մէջ մնաց չորս հատ շահաբեր տոմսակք (բիլէթք) բանկին Սիմֆերոպոլի ընդ համարովք 274, 275, 276 և 432 ի գումար 500 ր. արծաթ միայն 6 տոկոսի 24 փունտ ի գումարի 198 ր. և առձեռն դրամ 37 րուբ։

Դ. — Եկամտից գլխաւոր և հաստատուն աղբիւրն եղած է մոմավաճառութիւնը, որ ինչպէս հաշուէն կերևի՝ տարուան մէջ ծախուած է մօմ 10 փութ 31 ½ փունտ, իւրաքանչիւր փութը 2 ր. գոյացել է 862 ր. 91 կ. իսկ հանելով արժողութիւնը առքին գնովը 323 ր. 71 կ. ունեցել ենք վաստակ 539 ր. 20 կ. Այս մասին մեծ շնորհակալութիւն յիշելով ժամաւէր ժողովրդոց մեծաց և փոքունց՝ պարտք կհամարիմ ինձ

(*) Իսկ մնացեալ 200 ռբլ. ստանալու ենք, երբ յանձնենք կալուածագիրը։

գործեալ հրաւիրել նոյն բարեպաշտից առատաձեռնութիւնը դէպի մոմավաճառութիւնը գիտնալով որ եթէ սովորական չափը կրկնապատկելու բարեհաճին, եկամտին գումարն ևս ի վերջ տարւոյն կրկնապատիկ եղած կտեսնեն անշուշտ ։

Ե. — Տարուան մէջ աւելացել են եկեղեցական զարդեր. 1) Մի կարմիր ոսկեթել թաւշեայ շուրջառ փորուրարով և թեւնոցով ի դիպազարդէ հանգուցեալ Սարգիս աղայի Բերբէրեան. 2) Մի շուրջառ սպիտակ փառչայէ փորուրարով և թեւնոցով՝ ի դիպազարդէ հանգուցեալ Կարապետ աղայի Սօխուրեան, բազմերախտ հոգաբարձուէ ժողովրդական դպրոցին Սիմֆերոպոլի. 3) Մի կարմիր ատլազ շապիկ ի դիպազարդէ Աղէքսանդր որդւոյ Յովակիմ աղայի Սէֆէրեան. 4) Մի կարմիր ատլազ շապիկ ի դիպազարդէ որդւոյ գաղղիացի Շէվրիէ. 5) Մի կերպասեայ շապիկ ի դիպազարդէ կնոջ Պօղոսի Դէմիրչեան և 6) կերպասեայ ծածկոյթք և վարագոյրք ամպհովանւոյն ի հանգիսի թաղման Փրկչին բոլոր պարագայիւք. որոյ ծախքը թէև եղած է եկեղեցական փողով, բայց շինութեանը և կարելուն վերայ ամենայն ջերմեռանդութեամբ ձրիաբար աշխատութիւն գործեցին Պ. Գրիգոր Լ. Քէպէպճեան և տիկին Թագուհի Զաքարեան Սուրէնեան — Երևանցեանց։

Զ. — Եկեղեցւոյ վերանորոգութեան (ռեմոնթին ծախքը) որ եղած է ընդ ամէնը 193 ր. 20 կ. Ծախուց տարկաններուն մէջ նշանաւորն է երկաթեայ ծածքին կանաչ ներկը որոյ համար միայն վճարուած է 115 ռուբ. յետ այնորիկ պատուհաններուն ծեփքին (զամազքային) 15 ր. 30 կ. իսկ մնացեալ 62 ր. 90 կ. կաթողիկէից և եկեղեցւոյ պատերուն դրսի կողմի սուաղներուն (ըշկաթուրին), ապակիներուն և այլ մանր կարկատանաց վերայ գնացել է։

Է. Վերջ ամենայնի այս ևս հարկաւոր կհամարիմ ծանուցանել պատուելի ժողովրդականաց՝ որ թէև 735 ր. աւելեալ գումար մը կերևի, ինչպէս վերը պարզ կերպով մեկնեցինք, բայց յայնմանէ ևս առնելիք եկեղեցական ծախուած տունին գնէն 200 ր. բայց գիտնալու է՝ որ 1200 ռուբլւոյ չափ ալ շինութեան անհրաժեշտ հարկաւորութիւն կայ առաջիկայ ամառուան մէջ, նախ եկեղեցւոյ պարսպին հիւսիսային կողմի երկար պատը և երկրորդ ժամակոչին բնակութեան համար տուն մը։

## ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՇՈՒԱՏԵՍ ԱՆՁԱՆՑ.

Ստուգութիւն. Սիմֆերոպոլ քաղաքի Հայոց հասարակութեան ընդհանուր ժողովոյ յանձնարարութեամբ. այս հաշուեցուցակս մանրամասն քննելով քաղաքիս Վերափոխման Սրբուհւոյ Աստուածածնի Եկեղեցւոյ Երեցփոխանական մուտից եւ ելից մատեանին հետ, որ վասն 1876 ամի, գտանք ըստ ամենայնի ուղիղ. ուստի պարտք կհամարիմք մեզ, հաւանութեամբ ընդհանուր ժողովոյ հասարակութեան յայտնել Նորին Մեծապատուութեան արժանընտիր Երէցփոխանի. Նադվօրնի Սովետնիկ Ստեփաննոսի Զաքարեան Սուրէնեանց մեր լիակատար շնորհակալութիւնը, նորա անձնանուէր եւ արդիւնաւոր ծառայութեանը համար ի պայծառութիւն Տաճարին Աստուծոյ եւ ի պարծանս ժողովրդեան. 24 փետրվարի 1876 ամի. Սիմֆերոպոլ.

Ընտրեալ յընդհանուր ժողովոյ հասարակութեան հոգաբարձուք.

Դաւիթ Տէօվլէթեանց.
Յովակիմ Սէֆէրեանց.
Յակոբ Տավութեանց.
Աւետիք Խլէպնիրեանց.
Միքայէլ Թօփալեանց.
Առաքել Պապիեանց.

Յետ այսոցիկ հետևեցան քառասուն ստորագրութիւնք անդամոց հասարակութեան,

Ընդ իսկականին ուղիղ է,

ՍՏԵՓԱՆ ԶԱՔԱՐԵԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.